

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գին 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան միջ:

Օտարաբարադրողը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և առաջ օրերից):

Յարտարարությունը ընդունվում է ամեն լեզուով:

Յարտարարությունը համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Բազում: Ներքին լուրեր: — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Չէր-նոգորիա: Եղիպտական հարց: Խաղված: — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: — ՀՆՈՒԱԳԻՆՆԵՐ: — ՅԱՑԱՐԱՐՈՒԹԻՒՆ: ՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: «Տիֆլիսցի Ասպե-տեաններ» դրամա Սենեքերիմ Արծրունու:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

Փետրվարի 3-ին

Մի քանի ամիս է ահա, որ տեղեյս րեալական զորոյի հայ աշակերտները կարծես թէ յանկար-ծակի վառվել են: Մարդ զարմանում է համեմա-տելով այն ազգայնականներին, այն եւանգել, որ սրանք ունեն կարող ժամանակ արանից առաջ, այժմանի հետ: Հենց անցեալ տարի որքան հայ աշակերտներ եւ տեսել իրանց ընկերի վրա ծի-ծաղկիս հայերին գրքեր ու լրագիր կարդալու համար: «Армянский литературой занимается» ասում էր ծիծաղելով հայ աշակերտը իր ընկերին:

Տեսնում եւ այսօր մի բարձր դաստատան աշա-կերտ բարեգործական նպատակով փող է ժողո-վում իր ընկերներից, վարդ մի ուրիշը ստորա-գրութեան թերթ ձեռն մօտենում է մեկին և ըս-կում է համոզել նրան, թէ մենք պարտաւոր ենք օգնել Ռուսաստանում ուսանող աղքատ ընկեր-ներին: «Պարտեմ, ինչպէս ինչ չը համոզեք, որով-

հետ եւ իմ պարտաւորութիւնս իմանում եմ, ա-սում է նա և վեր առնելով թերթը ստորագրում է իր կարողութիւնից ել աւելի:

Երկու օրից յետ մի երրորդը հրաւիրում է քեզ ներկայ գտնվել այն ներկայացման, որ տալու են բարձր դաստան աշակերտները բարեգործական նպատակով: «Թէպէտ եւ այս դիշեր գնալու էի Բончаровի թատրոնը, բայց իմ ընկերներին «Ուսանողներ»-ը և «Վրատ»-ը աւելի եմ սիրում, քան թէ «Гроза»-ն: Ուրեմն տոմսակ չստրնեցէք, ասում եւս դու:

Այն ժամերը, որ անցեալ տարի անցնում էին սրանք ծաղրաբանութեամբ կամ խեղճ ընկերներից մէկին վիրաւորելով, այժմ անցնում են վայելուչ խօսակցութեամբ: «Կարողացիք այն յօդուածը, որ խօսում է օտարացած հայ աշակերտների մասին»: «Եւ ես», պատասխանում է երկրորդը և յետոյ ինքն էլ հարցնում է թէ. «Կարողացիք «Մշակում», թէ նոր «Գործ» ամսագիր է հրատարակվելու: Պրօգրամը հաւանելի է, բայց տեսնենք, պատաս-խանում է միւսը:

Չեմ մոռանում նոյնպէս յիշել, որ կրօնական խտրութիւն դնելը բոլորովին վերջացած է սրանց միջից, մենք հայ-աւետարանական աշակերտներս հաւատարապէս սիրում ենք և սիրվում մեր լուսաւորչական ընկերներին:

Վերջացնելով նամակս խորհուրդ կը տայի՜ք հայ բնակչութեան, որ ուշադրութեան չառնեն մի քանի պատաւ երկտասարդների պաղտութիւնը և չարոնական միջոց իրանց պարտքը ճանաչել:

Աղբակ Քառասնամյայն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԳՈՒԹՅՈՒՆ մի երկտասարդից ստացանք 20 ռուբլ և փօսի ծախս, ս. Բիւրքեմանի ֆօտոգ-րաֆիական ժողովածուն ուղարկելու համար: Փողը և աղբւր կը հասցնենք ս. Բիւրքեմա-նին:

Պարսկաստանի Մարագա քաղաքից եկող ճա-նապարհորդները պատմում են որ այդ կողմերը մի տեսակ ախտ է յայտնվել, որ քաղաքում է մարդու մարմինը: Այդ հիւանդութիւնը չափա-հասնելի մէջ է տարածված: Կան մարդիկ, որոնք զրկվում են քթից, չրթուներներից, իսկ շատերը մեռնում են: Ազատվողներ ևս լինում են:

ԱՂՎԱՆԻՑ մեզ գրում են որ Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գծի վրա մօտ 200 վերտա տարա-ծութեամբ չղփեցնեան արդէն սկսել է բանել և մինչև Աղբալ ճանապարհորդներին ձրի է բե-րում:

Մեզ գրում են ՆՈՒԹԻՑ: «Նուբեցի հայերի պէս անտարբեր ժողովուրդ գոչել ոչ մի տեղ չը կայ. ուսումնասիրել, որ իւրաքանչիւր տարի մի քանի հազարներ է կլանում ժողովուրդից, այսօր փակվելու վրա է և ոչ ոք ժողովուրդի զարգի-սը ճշմարտամով չէ հետաքրքրվում: «Ուսումնա-սիրական» ասված ընկերութիւնը, որի համար նոյնպէս մի քանի հազարներ հաւաքվեցան ժողո-

վրդից, այսօր անպայտացել է և ժողովուրդը իր տուած փողերի հաշին էլ չէ պահանջում:

«Մշակ» հաղորդած լուրը թէ Թիֆլիսի Ներ-սիսեան զարդի մի վարժապետ ծեծում է մա-նուկներին և նոյն իսկ բարձր դաստան աշա-կերտներին, ինչպէս մեզ գրում են, մեծ ազդու- է գցել զարդու: Մի պարտն այդ առիթով մեզ գրում է: «Պ. Բահաթրեան, Գերմանիայում ուսում առած դիտական մանկավարժը, ամենին չէ ու-րանում որ ծեծում է աշակերտներին և հաւա-տացնում է որ այդպէս էլ հարկաւոր է, որ Գեր-մանիայում ծեծը զարդներում ընդունված է: Պա-րսին կարելի է վերաբերել ժողովրդական առածը թէ «լսել է թէ Ալին մեռել է, բայց չէ իմացել որ Ալին»: Եւ ճշմարիտ, կայ Գերմանիայում մի հնացած մանկավարժական չիօլա, որին մնացած, աւելի նոր մանկավարժական վարդապետութիւն-ները այժմ արհամարհում են, որ ընդունում է ծեծը, որպէս ուղիղ միջոց: Բայց նոյն իսկ այդ հնացած վարդապետութիւնն էլ չէ ընդունում որ կարելի լինէր ալ ու ձախ ծեծել ամեն անհասարկ երեխային, այլ միայն բարձր ու վարժը, բնագոր-ծիւնը կատարելապէս փչացած երեխաներին և մինչև անգամ այս տեսակների հետ էլ ծեծի կու-սակից գերմանացի մանկավարժը, նախ քան դիմի ծեծին, հազար ու մի բարոյական միջոցներ է փորձում: Նախ անձնական յանդիմանութիւնը, յետոյ դաստանից ժամանակաւոր հեռացնելը, յետոյ երեխային առանց ձաշի թողնելը, կամ ծնողների մօտ տուն գնալու արգելքը, յետոյ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՏԻՖԼԻՍԵՐԻ ԱՍՊԵՏԵԱՆՆԵՐ» դրամա 3 արա-րուածով, հեղինակութիւն Սենեքերիմ Արծրունու:

Յունվարի 25-ին եւ թատրոնում էի: Թատրո-նը լի չէր, ժողովուրդը քիչ էր, բայց ու որ կար, մեծ մասամբ պատկանում էր մեր ինտելիգենցիա-յին: Առաջին և երկրորդ անտարակներում ինձ հետգնեալ մօտենում էին իմ բարձրագիւ ծանօթ-ներս, և բոլորը, առանց բացատրութեան, իրանց աստիկ զգոհութիւն էին յայտնում: Սենեքերիմ Արծրունու պիէսայի մասին: Մինը ասում էր թէ դրուածքը ճանճաղի է, միւսը թէ դադարաւոր մե-ղանշում է ճշմարտութեան դէմ, երրորդը թէ հե-ղինակը իր գրուածքով վիրաւորում է բնից հան-դիսականի է թիսակ ան, բարոյական ամենաուր-ղիցանքները, չորրորդը կարճ ասում էր թէ պիէսան ջուրն ընկաւ և այլն...:

Ներկայացումը վերջացաւ, վարդապետը իջաւ: Ո՛րքան էր իմ զարմանքը, երբ իմ լօժայից տեսայ, թէ բոլոր այն պարտները, որոնք մի կէս ժամ առաջ ամենամեծ արհամարհանքով էին վերաբեր-վում դէպի ս. Ա. Արծրունու պիէսան, անասելի ոգևորութեամբ, թէ պարտերից և թէ լօժաներից ծափահարում էին, կանգնում էին հեղինակին...:

Այդտեղ եւս հասկացայ թէ ինչ զին կարելի է տալ մեր հասարակ և պիէսայի կար ծիծաղել:

Մեր ինտելիգենցիան մոռանում է որ թատրոնի մէջ նստած, հանդիսականներից իւրաքանչիւրը պէտք է զանաչայ անաչառ. դատաւոր, բոլորը միասին պէտք է կազմեն հասարակական դատա-րան, որ ծանօթութիւն, ազգայնութիւն, ինա-մութիւն ոչինչ նշանակութիւն չը պէտք է ունե-նան: Այն բոլորից, երբ մարդ, եթէ այսպէս կա-րելի է ասել, իր վրա դնում է դատաւորի շքե-թան, նա ալ չը պէտք է իրան բարեկամ կամ ազգական համարի դատաստանի առջև ներ-կայացողին, պէտք է մոռանայ բոլոր խնամու-թիւնները:

Չեզանից պահանջում են դատավճիտ տալ մի

պիէսայի վրա, որի հասարակութեան կողմից վատ թէ լաւ ընդունվելուց կախված է նրա րեպուտա-րի մէջ մնալը, կախված է նրան հասարակական վկայաւորան տալը՝ չարոնական թէ ոչ բնի բարձրութիւնից կրթիչ ներդրութիւն ունենալ հասարակութեան ոչ թէ միայն ներկայ, բայց և ապագայ սերունդի վրա: Եւ դուք ահաղին պա-տասխանատուութիւն էք յանձն առնում ծախաւ-րել մի պիէսային, որին ձեր սրտում չէք համա-րում, որի մասին մասնաւոր խօսակցութիւնների մէջ մի ժամ առաջ մահւան դատավճիտ էք կար-դացել:—Ծափահարել, ասում եմ, միայն այն պատ-ճառով, որ հեղինակի հետ բարեկամ էք:

Այդպիսով ինքն հասարակութիւնը ստիպում է մեզ իր տան վարմունքով իրան կատարելապէս անտես առնել և յայտնել՝ նոր պիէսայի մասին մեր անկախ կարծիքը:

Երբ մի քանի ժամանակ առաջ օրիորդ Սօֆիա Դատիօսկի անձնապատկերիւն գործեց, գալթակդ-ված լինելով մի անաղնիւ երկտասարդից, «Մը-շակը» խորհուրդ տուեց մեր բնական գործիքին, այդ անպիտի օգուտ քաղել մի պիէսա գրելու հա-մար: Մենք չէինք կարծում որ անաղնիւ, օրիոր-դին խաբող երկտասարդը, անպատճառ պէտք է օտարազդի լինէր... կարծես թէ մեր հայերի մէջ բիշ կան նոյնքան և աւելի անաղնիւներ...:

Բայց «Տիֆլիսցի Ասպետաններ» հեղինակը միայն այդ տեսակի նեղ հայեացքով ըմբռնեց օր. Դատիօսկու անձնապատկերիւն դէպքը:

Ահա Ս. Արծրունու պիէսայի միտքը:

Թիֆլիսում ապրում է Ասպետանների բնա-նիքը: Բնաբնիքի գլուխը, Գեորգ Ասպետան մի այրիացած բարձրաստիճան պաշտօնեայ է, գնե-րալ է: Նա ունի երկու աղջիկներ Զօյա և Նադիա և մի որդի Ստեփան (համալսարանական): Հայրը երեւում է մի օտարացած մարդ, որ անպիտակա-բար օտարաւոր ուղղութիւնն էլ տալիս է իր զա-ւակներին: Այդ օտար և հայոց ընտանիքին խորթ ուղղութեան դէմ բողբոջում է միմյան համալսա-րանական որդին, Ստեփանը: Ասպետանի մեծ աղջիկը, Զօյան, արդէն պատկած է մի օտարա-գու հետ, դրանից ունի երկու երեխայ և չառ դիտարդ է դրա հետ, գնեւ ինչպէս ինքն է պատ-

մում: Նրա մարդը իր հինջ բացակայութեան ժա-մանակ ջարդում է երեխաներից մինին, և տանից փախչում է միւս երեխայով: Կինը վճռում է դի-մել դատարանին որպէս զի ստիպի իր մարդուն ե-րեխային յետ ապաւ: Մի և նոյն ժամանակ մի երկրորդ դրամա էլ կատարվում է զուգընթացաբար ստեղծելի հետ մի և նոյն ընտանիքում: Ասպե-տանի երկրորդ աղջիկը, Նադիա սիրում է մի օ-տարազդի երկտասարդին, Օտարականով աղքատու-նով: Սա դալթակղել է օրիորդին, ինչպէս երեւում է օրիորդի անհարկութիւններից և առհասարակ ընտանիքան մի քանի ցոյցերից, օրիորդը արդէն յղի է...:

Բայց ս. Օտարականով նոյնքան և աւելի անպիտան մարդ է յայտնվում, քան թէ միւս քը-րոջ մարդը: Նա նամակ է գրում Նադիային որ այլ եւ չէ կարող օգտակիլ նրա հետ: Մի խօսքով նրա սիրոյ զգացմունքով դուրսնալուց յետոյ, չարտում է օրիորդին: Նամակ բերողը յայտնվում է ինքն Օտարականով. Նադիա նրան հրաւիրել է տալիս իր սենեակը և նախ քան սա մի խօսք արտասանել, օրիորդը լուռ կերպով մօտենում է նրան և լաւ ապաւակ է տալիս Օտարականովին: Սա զարմացած, չուրած է մնում: Օրիորդը յայ-տնում է թէ այն ստորձան հարստ է, որ չի ա-ղաչի նրան պատկիլ իր հետ, նա արհամարհում է իր սիրելիանին, չը նայելով որ նա իր ապա-ղայ երեխայի հայրն է, և վերջացնում է իր խօսքը մի քանի ուժեղ և անպատիւ անուանի տալով օ-տարազդի պարտին: ցոյց տալով նրան դուռը Գրանից յետոյ, օրիորդը, ինչպէս երեւում է, իր կեանքը կատարելապէս կտրված է համա-րում և վճռում է անձնապատկերիւն գոր-ծել, համարելով անձնապատկերիւնը միակ էք իր անպատկան և ապարդիւն կեանքից: Մի դիշեր, աղօթք անելուց յետոյ, իր հայրենի տանը մնաս բարև ասելուց յետոյ, Նադիա գաղտի կերպով փախչում է տանից: Նրան միւս առաօտը տանե-ցինքը ամեն տեղ որոնում են. նա ոչ մի տեղ չը կայ: Մի քանի ժամից յետոյ օտարականը ներ-կայանում է և յայտնում է որ Կուր գետի մէջ ձկնորսները մի աղջկա դիակ են գտել: Մի նա-մակ է մի ապարանջան (բրաքետ) ապացոյց են որ գտնված դիակը ինչքան Նադիայի դիակն է. նա իրան ջուրն է նետել: Հետեւում է ընդհանուր սար-սուռ, հեկեկանք ու լաց և պիէսան վերջանում է Ստե-

փանի երկար մօտջողով, որի մէջ նա ամենադառն կերպով մեղադրում է հօրը իր այն անձուռնի և օտարաւոր դատարարականութեան համար, որ տուել է առհասարակ իր որդիներանց:

Այդ կարճ բովանդակութեանց արդէն հասկաց-վում է հեղինակի նպատակը: Նպատակը շատ գովելի է. զգուշացր յարուցանել մեր մէջ, որ մենք մեր աղջկանց չը պատկենք օտարազդի-ներին հետ, որովհետեւ բոլորն էլ զգաղդ կը լինեն: Նպատակը, ասում եմ, գովելի է, բայց իր միտքը յայտնելու և ապացուցանելու մեթօդը սխալ է, նպատակին չը համող է և նոյն իսկ անբարոյա-կան է:

Քիչ կը հեռանամ Արծրունու պիէսայից: Ու-րում եմ քիչ խօսել մանկավարժութեան վրա: Մանկավարժութեան մէջ երկու մեթօդ կայ երեխաներին դատարարականելու: Մի՛նք ընդունում են որ երեխան, մանուկը մեզ պէս մարդ է, միայն անհասարկ, նրան պակաս չէ, թէն դու մութ կերպով, սրտածանապաշտեան, մարդկային պար-տաւորութեան և իրաւունքի ինտիմկար: Կա մար-դարարական, նոր, բնական մանկավարժական սխաւում է: Նրա հիման վրա ծնողը կամ դատա-րակը պէտք է վարվի մանուկի հետ, ինչպէս հաւատարմ հաւատարի հետ, առանց ծեծելու, առանց վախեցնելու, առանց անբարոյան, չղաւ, կամ չափազանցած բաներ նրան պատմելու, ընդ-հակառակն, թէն պարզ, ժողովրդական, մանկա-կան ոճով պէտք է երեխային ամեն բան բացատ-րի, ինչպէս դա կայ, հասկացնի նրան զուտ իրա-կանութիւնը, ներշնչելով նրա մէջ մի և նոյն ժամանակ մարդկային պարտքի և իրաւունքի հակացողութիւնը: Ուրում էք որ երեխան դիշեր ժամանակ մնակ չը վաղ տար այգի, պէտք է ուղիղ և պարզ կերպով հասկացնէք նրան մնակ գնալուց իրական վտանգները, պէտք է ասեք թէ չունը կարող է քեզ վրա յարձակվել, բայց չը պէտք է ասեք նրան որ գալիքը քեզ կուտեն, քանի որ դա սուտ է և ձեր այգիում գալիք չը կան: Ուրում էք հասկացնել թէ որքան վնասում է շատ քաղցրեղէն ուտելը, բացատրեցէք նրան թէ քաղցրեղէնը որքան վնասում է ստամոքսի մար-սողութեանը և այլն...:

Միւս մանկավարժական սխաւում, որ արդէն հնացել է, ընդունում է որպէս մանուկներին

հրապարակական յանդիմանութիւնը և այլնս վերջապէս երբ ոչինչ միջոց չէ ներդրածում, մանկավարժը դիմում է ծեծին, որ նոյնպէս հազար ու մի աստիճաններ ունի, դասատան մէջ ձեռն համար արած ամենաթեթեւ հարուածից, մինչև աւելի ծանր մարմնական պատիժը: Բայց Գերմանիայում նոյն իսկ ծեծի կուսակից մանկավարժը երբեք աջ ու ձախ չի ծեծի ամեն պատահած երեխային, քանի որ նոյն երեխային դուցէ ամենաթեթեւ յանդիմանութեամբ կարելի էր ամաչեցնել և կատարելապէս ուղղել:

Լուսմ երբ որ ներկայ տարվայ սեպտեմբեր ամսից թիֆլիսի Գայանական օրիորդաց դպրոցի տեսուչ պ. Ն. Խոսրոսով գիտատրութիւն ունի հըրատարակել թիֆլիսում մի մանկավարժական ամսագիր «Վարժարան» անունով: Ասում են որ այդ ամսագիրը կը լինի էջմիածնի ձեռնարանի պրօֆէսոր Լ. Բ. Երզնկեցի օրդան: Յայտնում որ Գերմանիայում ուսում առած պ. Բաճարեան ծեծող մանկավարժը չի մասնակցի այդ ամսագրին:

Փետրվարի 8-ին Փրանսիական բարեկենդանի օրը, թիֆլիսի Կրօնօթում քաղաքիս Փրանսիացիները տուեցին իրանց սովորական պարահանդէսը: Ժողովուրդը լցնում էր դահլիճները և մեծ ուղարկութեամբ նայում էր պար եկող Փրանսիականներին վրա, որոնց հագուստները շատ բազմատեսակ էին:

ՎԱՂԱՐՏԱՊԱՏԻՑ պ. Պալատական մեղ նամակ է ուղարկել որի մէջ հերքում է թէ ինքն չէ ստացել «Մոլոս Խորենացու» դրքի սրբագրութեան որ և է վարձ, քանի որ սրբագրութիւնը արել է մի այլ պարսն: Կարծում ենք որ պ. Պալատական այլ ևս չի պահանջի մեղանից իր նամակի տպագրելը, քանի որ առաջիկայ տեղեկութիւնը մինք ինքեկս հերքեցինք «Մշակի» նախընթաց համարում:

ՆՈՒԹՈՒՑ մեզ գրում են: «Այս տարի եղաւ քաղաքիս դեպուտատի ընտրութիւնը: Հայ ազգայնականութեան 4,000 հոգու վրա դեպուտատ

ընտրվեցաւ մի մարդ, որ թէև ինքն հայ է, բայց ոչ խօսել և ոչ կարողալ գիտէ հայերէն: Քաղաքիս մարտական վրա այստեղ ոչ ոք չէ մտածում և ուշք չէ դարձնում. ամեն տան առջև փողոցներում աղբի ահագին կոյտեր են ածված, որոնք իրանց դարչելի հոտով սարսափում են օրը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՉԵՐՆՕԳՈՐԻՍ

Չերնօգորիական կառավարութիւնը մեծ ուշադրութիւն է դարձնում այն անցքերի վրա, որոնք պատահում են Չերնօգորիայի սահմանների վրա Աւստրո-Ունգարիայի կողմէ: Այն ժամանակից, որ սկսվել է Հերցեգովինայի մէջ ապստամբութիւնը, իշխան Նիկոլայի ներկայութեամբ անդադար կայանում են միեւնոսները խորհուրդներ: Որովհետև Չերնօգորիայի մէջ սահմանադրական հիմնարկութիւններ չը կան և միեւնոսների մէջ ոչ զործնական և ոչ տէրեւեհական համբերաշխութիւն չէ կարող լինել, այդ պատճառով իւրաքանչիւր բաժնի կառավարիչը լինում է իրան յանձնած զործերը, ստանալով նախապէս իշխանի համաձայնութիւնը: Այդ կարգերը բոլորովին փոխվեցան այն ժամանակից, երբ սկսվեան երկիրները մէջ ապստամբութիւն սկսվեցաւ, որ այնպիսի պարտականութիւններ դրեց Չերնօգորիայի վրա, որոնց անկարելի է անուշադիր թողնել: Միեւնոսները խորհուրդի ժամանակ միշտ ներկայ է դանվում Չերնօգորիական իշխանը, որի կառավարութիւնը հասկանում է իր պարտականութիւնը և աշխատում է զործարկել անհրաժեշտ միջոցները: Հարցը նրանում է, որ Չերնօգորիան առ ժամանակ ոչինչ օգնութիւն չը հասցնէ ապստամբներ:

համայնությանը հետ... Եւ ահա սկսվում է նախ ներքին կռիւր, ներքին հոգեկան յուզմունքներ, պատերազմը և ապա, երբ մասնաւոր երեխաներն էլ են ծնւում, ու նրանց պէտք է դաստիարակել այս կամ այն ուղղութեամբ, սկսվում է արդէն ընտանեկան երկպառակութիւնը, ընտանեկան փոխորկը, որ նայելով իր ստատկութեան, կարող է կամ մահով, կամ միայն բաժանվելով վերջանալ: Դրա համար հարկաւոր չէ որ կողմերից միւր կամ միւր լինի անպատճառ անախտան:

Բայց այդ տեսակ պիկետ կամ բռնի գրեւոր համար հարկաւոր է դիտողութիւն, մարդկային կենսի հմտութիւն, մարդկային սրտի հոգեբանական նուրբ ըմբռնութիւն:

Երկրորդ մեթոդը, պէտք է ցոյց տալ որ միասնակար է հայ օրիորդի համար պատկեր ստարագրի մարդու հետ, և ահա հեղինակը ընտրում է մի հեշտ միջոց. նա ցոյց է տալիս բոլոր օտարազգիներին անպատճառ անախտան, հրէշաւոր մարդիկ: Ինչպէս ևս անուանեցի մանկավարժական հնաշուք մեթոդը անբարոյական, այնպէս էլ կամայական պէտք է այդ տեսակ ծայրայեղ, ճշմարտութեան, և իրականութեան դէմ մեղանշող դրականական մեթոդը անուանեմ նմանապէս անբարոյական, քանի որ նա չեղվում է ճշմարտութիւնից, ջանում է մոլորեցնել հասարակութիւնը:

Միայն մի բան կայ, մանուկին կարելի է վախեցնել, սանձահարել, հաւատարմեցնել նրան չեղած մի բան, իսկ հասակ առած հասարակութիւնը աւելի թերահաւատ է: Դուք, ուղեւորող զորանք յարուցանել հայ ազգիկանց մէջ դէպի օտար երկրասարգները, ցոյց էր տալիս բնով վրա որ ամեն մի հայ ազգիկ, պատկերվում օտարի հետ, անպատճառ դժբաղդ կը լինի, որովհետև օտարները անպիտան են, և իսկ հասարակութիւնը իր շուրջը նայելով, նոյն իսկ դուցէ թաւաղանքի ներկայ դանձաբանների մէջ է յիշելով հայրաւոր մի օրինակներ, պարզ տեսնում է որ, բնորոշական, հայ օրիորդները, պատկերվում օտարների հետ, շատ բազմապէս են լինում, որովհետև նոյնքան օտարացած են, որքան իրանք օտարները:

Հեղինակին հարկաւոր էր ազգացուցանել որ հայ ազգիկը պատկերվում մի օտարազգու հետ,

ինչ: Հերցեգովինայի սահմանների մօտ եղած զօրքերը ուժեղացած են և հրաման են ստացել անգոր դարձնել այն ապստամբներին, որոնք կանցնեն Չերնօգորիայի սահմանները: Մինչև անգամ պաշտօնական շրջանները այն կարծիքի էին, որ Չերնօգորիան պէտք է օգնել իր ցեղակիցներին և ոչ թէ նրանց ընդդիմադրել: Բայց իշխանի հեղինակութիւնը յաղթող հանդիսացաւ, այնպէս որ Չերնօգորիան կը կատարէ այն բոլոր պարտականութիւնները, որոնց պահանջում են միջազգային օրէնքները:

ԵԿԻՊՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Եւրօպական պետութիւնները արդէն առաջին քայլն արին եղիպտական զործերին միջամտելու ճանապարհի վրա, նկատում է «Голос» լրագիրը: Գեր Կայսրէի մէջ հասկաւ կարողացաւ կազմակերպել Մահմուդ-Բարեզիկի և Արաբի բէյի ազգային միեւնոսարութիւնը և արդէն Գերմանիայի, Աւստրո-Ունգարիայի, Նապոլիի և Ռուսաստանի զեկապանաները մի դրութիւն ուղարկեցին Բ. Կրանը, որի խական բովանդակութիւնը թէպէտ դեռ որոշակի յայտնի չէ, բայց որ վերաբերում է եղիպտական նոր միեւնոսարութեան ձգտմանը փոփոխել եղիպտական զործերի այժմեան դրութիւնը, այն է ոչնչացնել եւրօպական պետութիւնների հակողութիւնը եղիպտոսի վրա: Անգլիան և Ֆրանսիան չը մանակցեցին եւրօպական չորս պետութիւնների այդ քայլին: Ինչպէս յայտնի է, այդ երկու պետութիւնները նախամեծար են համարում ներգործել ուղղակի եղիպտական կառավարութեան վրա, առանց դիմելու Բ. Կրանը:

անպատճառ դժբաղդ կը լինի: Այդ ապացուցանելու համար նա ընտրեց մի չափազանցած մեթոդ, որ միշտ աւելի հեշտ է, քան թէ բնական, իրականութիւնը նուրբ, հոգեբանական քննող մեթոդը. ամեն օտարները վատ են:

Ընդունելով որ ամեն հայ ազգիկ, որ պատկերվում է օտարի հետ դժբաղդ է լինում, բայց որ ազգիկը, օտարացած հայ ազգիկը, թէ հայութիւնը սիրող, հայութեան մէջ կրթված հայ ազգիկը:

Անկեղծիմ Արքեպիսկոպոս Կալիստ և Զոյան պատկանում են հայոց այն շրջանին, որի ընտանիքում օտար լեզուով են խօսում, օտար ուղով են միմեանում և կրթվում, օտար գրականութիւն, օտար բռնաներ, կաղալով են զարգանում և որի անդամները հայութեան հետ կապված են միտում միմիայն լուսաւորչական կրօնի միջոցով, որի ծիսակատարութիւնները մինչև անգամ չեն հասնում և չափաւ մի բազմ, կարծես, խղճի տանջանք է դրում որ օտարին է սիրում, և այդ տանջանքը նա արտայայտում է նրանով որ նրան անտանկի է լինում լսել մօր փեղկմանից, հայոց պատարագի վրա խօսակցութիւնը: Բայց դա անքնական է. մի օտարացած հայ օրիորդ, որ պատկերվում է, կամ մի հայ կին որ արդեն պրոպագանդ է օտար մարդու հետ, երբէք չէ դրում և չէ էլ կարող զգալ ոչինչ խղճի խայթում, քանի որ պատկերվում օտարի հետ նա ոչինչ չէ կրցնում: Ինչ է փոխվում նրա դրութեան մէջ, ոչնչ: Ինչպէս նա օտարացած էր, այնպէս էլ օտարացած կը մնայ, ինչպէս միշտ օտար լեզուով էր խօսում և օտար գրքեր էր կարդում, օտարացած դադարներն ունէր, այնպէս էլ կը շարունակէ պատկերվում օտարազգու. հետ: Իսկ հայութեան հետ նա կապված է միմիայն լուսաւորչական կրօնի միջոցով, որ նրա համար մի մեղեթիւն է, որ նա շատ հեշտութեամբ և առանց արգելքի կը շարունակի էլ կատարել իր ամբողջ կենսը, նա կը շարունակի, օտարի կինն էլ լինելով ամեն մեծ տօներին ջերմանալովութեամբ դիմել հայոց եկեղեցին, լսել պատարագը, որ չէ հասկանում, ինչպէս ինքն է խոստովանվում, կը շարունակի խոստովանվել և ճաշակել հայոց եկեղեցում, կը շարունակի մուսկոյցի օրը օրհնել առ հայ քահանայի ձեռքով իր մօր սիրելի դե-

Այդպիսով հէնց սկզբից եւրօպական պետութիւնների մէջ տարաձայնութիւն է ծագել, բայց այդ տարաձայնութիւնը աւելի շուտ ձեւական է, քան թէ սկզբունքով: Լուսնի դոնի և Գարիկի մէջ կարելի են համարում ներգործել ուղղակի խեղդիկ վրա, մինչդեռ Բերլինի, Վիեննայի և Հռոմի մէջ զիպոման տիական տեսակետից աւելի կանոնաւոր են համարում դիմել ուղղակի այն կառավարութեանը, որից կախում ունի Տեղեկիփաշա:

Գործը իսկապէս դրանով չէ փոփոխւում: Բերլինի դաշնագիրը ստորագրող բոլոր պետութիւնները անհրաժեշտ են համարում պահպանել եղիպտոսի մէջ status quo: Նրանք ամենքն էլ յայտնում են ամենալրջառողական ձեով, որ Հերցեգովինայի չէ կառող վերաբերվել մի յեղափոխութեան, որ ուղղված է եւրօպացիների դէմ:

Հետաքրքիր է իմանալ, թէ Ինչ կը պատահանի Բ. Կուսը նրան ուղարկած գրութիւններին: Վերջին ժամանակներում Կ. Պոսի մէջ կարծես թէ մի համոզմունք է տիրում, որ սուլթանը կարող է առանձին ուշադրութիւն չը դարձնել եւրօպական մեծ պետութիւնների բողոքների վրա: Սուլթան Աբդուլ-Համիդի գիտնորական զեկապանութիւնը, որ այդպիսի յարգանքով ընդունվեցաւ Բերլինի և Վիեննայի մէջ, և Բերլինից Կ. Պոսի ուղարկած նոյնպիսի զեկապանութիւնը յայտնաւորեցին սուլթանի խորհրդատուների մէջ, որ Գերմանիան բարեկամաբար կը վերաբերվի թիւրքաց կատարութեան մտադրութեանը՝ աղատել այն հոգաբարձութիւնից, որին երկարվել է Թիւրքիան Բերլինի դաշնագրի շնորհիւ: Ար. Բ. Կուսը ունի այդպիսի յոյսեր, ապացուցե-

րեղմանը: Նայեցէ՛ք ձեր չորս կողմը և կը տեսնէք որ այդպէս են վարվում իրանց ամբողջ կենսը հարկաւոր հայ կանայք, որոնք պատկանում են օտարների հետ. նրանք շատ բազմաթիւ են իրանց ամուսնանքի հետ և խիղճը նրանց ամենին չէ չէ ամուսնում և չէ էլ կարող ամուսնի, քանի որ նրանք ուղիւ, որ և է բուն ազգային բարոյական պահանջներ ամենին չունեն և չեն էլ կարող ունենալ, քանի որ նրանք այդ դրութեան մէջ իրանց շատ բազմաթիւ են համարում, կատարելապէս օտարացած լինելով, հայութեան համար նոյնքան օտար լինելով սրբան և իրանց օտարազգի ամուսններ: Անեղք է, ինչդեռ, ինչ զգալագու նորութիւն կը լինի իմէ՛ք Նապիա և Զոյան փոխանակ պատկերվում (օտարականութիւն և Գոսովի հետ) պատկերվում մի կարապետով, կամ մի Մուրադովի հետ: Զանապանութիւնը այն կը լինի միայն որ կարապետով և Մուրադով լուսաւորչական կրօնի են պատկանում, բայց նոյնքան հայ չեն, սրբան (օտարականութիւն և Գոսովի հայ չեն): Նապիա մի լուսաւորչական Մուրադովի կինն էլ դառնալով նոյնքան օտարացած կը մնայ, առաւօտից մինչև դիւշեր օտար լեզուով կը խօսել մարդու և նրա ազգականներին հետ, նոյնքան չէր մտածի հայութեան վրա, որքան չէր մտածի նոյն հայութեան վրա Գոսովի կամ (օտարականութիւն կինը դառնալով, կը դաստիարակել իր երեխաներին նոյնպէս օտար լեզուով, կը ներշնչել նրանց մէջ օտար դաստիարակ և դուցէ նոյն իսկ արհամարհանք դէպի իր ազգութիւնը, քանի որ նրա մէջ այդ Նապիայի կամ Զոյայի մէջ դէպի ազգային դադարները սիրող ամենափոքրիկ նշոյն անգամ չը կայ:

Արդէ՛ք բան է իմէ՛ք Նապիա լինել մի օրիորդ Բերլինից, որ արդէն ամուսնացել էր իրանց քանի է հայութեան զաղափարին, թէ կուզ աշակերտելով մի եղիպտոս Զանուսիանի ձեռքում ընդունելով նրանից բաւել և չը նկատելով վատը չափաւորականը, կեղծը, մի օրիորդ (Բերլինից) ասում են, որ այ թէ միայն սիրում է արդէն իրան շրջապատող հայութիւնը, նուիրելով իրան հայ գիւղացիները զաւակների դաստիարակութեանը, բայց հետաքրքրվում է մինչև անգամ թիւրքաբանակ հայերի փնտալով և դնում է մինչև անգամ Հռոմ յայտնա: Արդէ՛ք բան կը լինէր, ասում են, եթէ

վում է ի միջի այլոց նրանով, որ թիւ-
քաց կառավարութիւնը վճռողականապէս
հրաժարեց փոփոխել նոր կանոնները հիւ-
պատոսների մասին և պահանջում է եւրո-
պական պետութիւններից, որ նրանք ձա-
նաչեն այդ կանոնները, որոնք փոփոխում են
հիւպատոսների քաղաքական գործունեու-
թեան բնաւորութիւնը:

Նշանաւոր է նոյնպէս և այն իրողութիւնը,
որ արտասահմանից ստացված լուրը դեւ-
պանների գրութեան մասին եզրկտական
հարցի վերաբերութեամբ անուանում է միայն
առուայց, աւստրո-ունգարական և իտալական
դեսպանատունները և լուում է դերմանական
դեսպանատուն մասին: Այդ պակասութիւնը
լրացրեց այստեղի ֆրանսիական լրագիրը,
որ յայտնեց, թէ Գերմանիան նոյնպէս մաս-
նակցում էր այդ գործին: Այդ աւելումով
ճշգրտութիւնը մենք չենք կարող կասկածել,
բայց առիթ ունենք մտածելու, որ գերմա-
նական դեսպանատունը ուշ ներկայացրեց իր
գրութիւնը և այդ էլ արդաւ, ևնթարկելով
միւս պետութիւնների պնդումներին:

Այսպէս թէ այնպէս գործը սկսված է և
բոլոր մեծ պետութիւնները եզրկտական
հարցին միջազգային բնաւորութիւն են
սուել այն մտքով, որ նա չէ կարող վճռվել
բացառապէս Վաշինգթոնի կամ Վ. Պոյսի մէջ:
Այնու ամենայնիւ ցանկալի է լինել, որ
այդպիսի սկզբից յետոյ որքան կարելի է
շուտով վճռվել եւրոպական ներգործման
ձեւը Բ. Կրան վրա եզրկտական հարցի վե-
րաբերութեամբ: Այն Անգլիան և Ֆրանսիան
կը շարունակեն առանձնացած գործել միւս
պետութիւններից, քանի որ վիճելի կը լինի
այն հարցը, թէ Կայրէ թէ Կ. Պոլսը պէտք
է լինի եւրոպական պետութիւնների ներ-

գործման կէտը, եզրկտական «ազգային»
կուսակցութիւնը կը կատարէ իր գործը և
եւրոպացիները կը վճռվեն այն երկրից,
որտեղ նրանց ներկայութիւնը միակ գրա-
ւական է Սուէզի ջրանցքի միջազգային նը-
շանակութեան համար:

ԻՏԱԼԻԱ

Հոսովց «Polit. Corresp.» լրագրին հա-
ղորդում են փետրվարի 4-ից: Այստեղի
պարզամեծական և քաղաքական շրջաննե-
րի մէջ մեծ անբաւականութիւն պատճառեց
այն հանգամանքը, որ արմատական կուսակ-
ցութեան գլխաւոր լրագրիւնից մէկը տալից
մի գաղանի շրջաբերականի բովանդակու-
թիւնը, որով արտաքին գործերի մինիստր
Մանչինի գիմել էր խտրական դեսպանին
Բերլինի մէջ և որ վերաբերում էր վերջին
ժամանակներում բարձրացրած պապական
հարցին: Մինիստրը այդ շրջաբերականի մէջ
եւտանդով և արժանաւորութեամբ է խօսում
և այդ պատճառով շրջաբերականը ոչ օտար
պետութիւնների և ոչ խաղաղի մէջ վատ
տպաւորութիւն չի գործի: Այսպէս թէ այն-
պէս շրջաբերականը դադանի էր և նշանակ-
ված էր ոչ թէ գերմանական պետութեանը
հաղորդելու համար, այլ որպէս զի նրա
մէջ արված հրահանգները դեսպանը ի նկա-
տի ունենար, հետեւապէս նրա հրատարա-
կելը բոլորովին ցանկալի էր: Այդ պատ-
ճառով ամենքը զարմանում են, թէ արմա-
տական կուսակցութեան լրագիրը որտեղից
կարող էր ձեռք բերել նրա բովանդակու-
թիւնը: Անկարելի է կասկածել, որ արտա-
քին գործերի մինիստրութեան մէջ ծառայող-
ները մէկը յայտնեց այդ գաղանիքը: Մի

քանի պատգամաւորներ մտադիր են այդ
անցքի պատճառով կառավարութեանը հարց
առաջարկել:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

«Gaulois» լրագիրը հաղորդում է, որ փարիզի
բորսայի անալիտիկները ոչ թէ միայն խրիստի-
նա Նիկոնի ամուսնու խեղադարձեան պատճառ
գարծաւ, այլ և երգչուհի Լեյզալիի ամուսնու, ո-
րին, բորսայի վրա կրած կորուստների պատճա-
ռով այս օրերս տարան բժշկապետ Բլանչի դժա-
նայր:

Վիեննայում հաւաքված ստատիստիկական տե-
ղեկութիւններին նայելով, այժմ վերջնականապէս
յայտնի եղաւ, որ Ռիչարդ-Մարտինով աղբիւրը գո-
հեր թիւը 383-ի է համարւում, որոնցից 166-ի
անձնատուութիւնները ճանաչված են:

Յայտնի է, որ շուտով դաւու է Անգլիա դու-
լուսների նախկին թագաւոր Սեդիկայո: Առում
են, որ նրան կողմնակից աֆրիկական երկր պրինց-
ներ, երկու երեւի անձինք և չորս ծառաներ:

Գերմանական պնդումներից մէկում պատու
չարութեան համար մի քանի աղանդներ պատմելու
ժամանակ, պախարակելով անց նրանցից մէկին,
«Տես թէ ինչքան չարութիւն եւ անուշ, ֆրից,—
դու մտածում ես խում էիր իմ կաթը: Բայց դու
զոտեա, թէ ինչպէս է անուշամտով այն բարձրա-
դին կաթը, որից ոչինչ չէ կարել ծածկել, որը
ամեն բան տեսնում է, որի առաջ եւ ինքս ոչ
այլ ինչ եմ, եթէ ոչ մէկ չնայն աւաղի հատիկ:»
Ֆրիցը դաժնապէս արտասուելով պատասխանում
է. «Այո, դիտեմ. դա տիկին պատուին է»:

«Բալտիկա Վիեննայում» լրագրին հաղորդում
են, որ յունիստի 18-ին վախճանվեցաւ ծերու-
նի Կան-Բլաւա, որը 128 տարեկան էր: Դե-
լուսին, թէ և վերջին 11 տարին ոչինչ չէր տես-
նում, բայց դուարով էր և մինչև մահը թեթեւ աչ-

խառններ էր կատարում: Հինգ տարի առաջ
մեռաւ նրա որդին, որը 90 տարեկանից աւելի էր:

«North China Herald» լրագրում կարդում
ենք, որ կանտոնեան փոխարքան զինուորական մի-
նիստի յանձնարարութեամբ, դիմեց տեղային ազ-
գայնականութեանը մէկ շրջաբերականով, որի մէջ նա
նախադրույալն էր քաղաքի բնակիչներին պատե-
րազմական աստուծու, Կուան-չայի տաճարը չաչե-
լել, չերկրպագել և զոհաբերութիւններ չանել նրան:
Այդ աստուծոյ, ասված է շրջաբերականի մէջ,
չպարապում է միայն պատերազմական գործերով
և ուրիշ բաներով բոլորովին չէ հետաքրքրւում:
Նա մտածում է միայն զինուորների, թիւզանօթիւն-
րի և հրացանների մասին, և բոլորովին ուշադրու-
թիւն չէ դարձնում ոչ-զինուորականների աղօթք-
ների և զոհերի վրա: Այդ շրջաբերականի հրատա-
րակութեան հետ միաժամանակ վերջինիւ առ-
տուծու բոլոր պատկերները յարգունակ դրակե-
ցան և նկարիչներին արգելեցին նորերը նկարել:
Չինուորական մինիստրութիւնը յանձն առաւ այդ
պատկերները չլինել սակ միայն զօրքի համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 փետրվարի: Բացված
է տեղեֆոնի հաղորդակցութիւն Կուշայի
և Բարօխուզերի մէջ: Օգէսայի արքեպիս-
կոպոս Պլատոն նշանակված է Կիւմի վախ-
ճանված միտրոպոլիտ Ֆիլօֆի տեղը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 փետրվարի: Պետական
բանկի 50% տոմսակը առաջին շրջանի արժէ
95 ռ., երկրորդ 91 ռ. 37 կ., երրորդ 92 ռ.,
չորրորդ 91 ռ. 25 կ., հինգերորդ 90 ռ. 37
կ., չորրորդ 50% տոմսակը փոխառութեան
տոմսակը արժէ 219 ռ. 25 կ., երկրորդ 218
ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառու-
թեան տոմսակը արժէ 90 ռ. 25 կ., երկրորդ
90 ռ., երրորդ 90 ռ., չորս 8 ռ. 5 կ.:
Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,53
պէնս, ռուսաց 100 ռ. շաբաթը վրա ար-
ժէ 208 մարկ 87 պֆ., ֆարիզի վրա 258
ֆրանկ 25 սանտիմ: Բորսայի արամագրու-
թիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

մի օրիորդ Բերդեանց պատահմամբ սիրելի մի օ-
տարագրուն, նրա սրտի մէջ կը սկսվի մի անըն-
կարգելի կուր, պատերազմ,—մի կողմից պար-
տաճանաւորութեան զգացմունքը դէպի ապրիլ, դէպի
իր սիրած, պաշտած դադախարները, իսկ միւս
կողմից սէր դէպի մի օտար մարդ, որի հետ կապ-
վելով նա դիտէ թէ ամեն բան սէտք է դառնա... Եւ
իր գիւղական մանուկների դատարարութիւնը և
մայրնի քաղցր բարեգութ բնութեան չլծա-
նում և հայտնեան վրա հոգսերը և յափշտա-
ված սէրը դէպի իր աղբորթիւնը: Նա ունի ամեն
բան կորցնելու: Իսկ Նախկին կամ Չոյա պակ-
վելով օտարների հետ, ոչինչ չունեն կորցնելու:
Նրանք ի դուր են տանջվում, նրանք կարող են
նոյնն անել, ինչ որ անում են իրանց չորս կողմ
հարկաւորում հայտնիները, որոնք օտարների կա-
նայք են դարձել. թէ կուզ ամեն կիլիակի օր դը-
նալ հայոց եկեղեցի, կանգնել մինչև պատարայի
վերջը, որ չեն հասկանում, իսկ տարեկը մի ան-
գամ օրձնել տալ մօր կամ հօր գերեզմանը:

Մի օրիորդ Բերդեանցին, մի ճշմարիտ հայ ա-
ցած հայ օրիորդին, եթէ նա զգաղապէս սի-
րել մի օտարագրուն, կը մնար միայն երեք ելք.
կամ հայացնել իր սիրելիներին, եթէ այդքան բա-
ւոյական ոյժ ունի, կամ քաջութեամբ հրաժար-
վել իր սիրտը զգացմունքից և մինչև անգամ իր
անհարազատ երեխան ձեռնի բռնած, գնալ կըր-
կին դուրը և շարունակել իր կրթութեան գործը
գիւղացիների մէջ, իր որդուն էլ հայացնելով: Վեր-
ջին ելքը կը լինի նրա համար, եթէ այնքան
բարոյական ոյժ չունի,—անձնատպաւորութիւն գոր-
ծել: Այդտեղ անձնատպաւորութիւնը մի մեծ խոր-
հալը կունենար: Իսկ Արծրաւու Նախկին անձ-
նատպաւորութիւն է գործում ոչ թէ այն պատճա-
ռով որ զգում է թէ դաւաճան է եղել հայութեանը,
—և այդ զգացմունքը նա չէ էլ կարող ունենալ
քանի որ ինքն ոգով հայ էլ չէ,—այլ միայն չը
կարողանալով դիմանալ այն ամօթի զգացմուն-
քին, որ կունենայ մի անհարազատ երեխայ: Կրկի
նոյն զգացմունքի տակ ճնշվելով և անձնատպաւոր-
գրիւրը Նախկինի գործից իր անձնատպաւորու-
թիւնը. Ի հարկէ անհայտնի էր ընդունել որ մի
սովորի, որի հարցը ընթացի էր, իսկ ինքն միայն
լուսաւորչական դաւանութեան էր պատկանում,
նա ոգով հայ լինելը: Նա էլ երեւի գործեց անձ-

նատպաւորութիւն, որպէս խաբված կին և մարդ,
և ոչ թէ որպէս տանջվող հայուհի:

Ս. Արծրաւու պիեսայում երկու օտարագրունե-
րի տիպերը, Գծնով, սրին չենք տեսնում, և Օտա-
րականով, որի հետ անձամբ ծանօթանում ենք,
երկուսն էլ անտիպան, սրիկա մարդիկ են: Բայց
տուրի կողմից եթէ երկու հայ համայնաբանական
երկուսն արտաքին, Նախկինի երկուսն Օտարականը
նրա ընկեր ու բարեկամ Նահապետ Ազատեանը
վատ մարդիկ չեն, բայց լաւ էլ չեն: Նրանք ան-
գոյն, անգործ, պիեսայի ընթացքի վրա ոչինչ ներ-
գործութիւն չունեցող տիպեր են, նրանք երկուսն
էլ փայտի կտորներ են, աւելի ոչինչ: Գուցէ այդ-
պէս էլ հարկաւոր էր, գուցէ նոյն իսկ դա հեղի-
նակի նախատին էր: Բայց ինչ և ինչ, եթէ մի
կողմից մենք զգում ենք պիեսայի օտարագրի
սրիկա տիպերից, չենք էլ կարող համարել երկու
հայ երկուսն արտաքին տիպերին, չենք կարող ար-
հաւանաբանել չը վերաբերվել Օտարականի պէս խօ-
սող, խօսքով բողբոջող, ամենքին քննադատող
բայց ոչ զքի վրա, նոյն իսկ իր երկուսն արդ քրոջ
վրա ոչինչ ներգործութիւն չունեցող երկուսն ար-
դին, կամ իր միտքն ու սէրը ամենատարակաւ
կերպով արտայայտել անկարող Ազատեանի պէս
երկուսն արտաքին: Ինչ բարոյական կամ մտաւոր դե-
րագնացութիւն է ցույց տալիս Ազատեանը համե-
մատելով Օտարականի օտարութեանը, ինչպէս պէտք
է հրապարակի, որ սիրի Նահապետին,—չը գիտեմ: Ին-
չին է երեւում, թէ Նահապետը սիրում է Նա-
ղային,—գարծաւ չը գիտեմ: Այնքան արդու-
թիւն էլ չունի այդ հարցը, որ համոզվելով օտարագրու-
միտքն ամենքին մէջ, ինքն զրգով լինելով ան-
ստման սիրտը զգացմունքից դէպի խաբված հայ
օրիորդը, մօտենար նրան և առել: «Գուցէ տեսնում
էք որ խաբվել էք, նա անպիտան մարդ էր, նա
ձեզ չէր սիրում, իսկ եւ գարծաւ սիրում եմ ձեզ,
ըստ ինձ այնքան թանկ էք, թէ որպէս իմ սիրտը
առարկայ և թէ որպէս հայ աղջիկ, որի կորուստը
կը լինի և իմ մահը,—որ եւ ձեզ առաջարկում
եմ իմ կինս լինել, պատրաստ եմ ձեզ իմ աղբա-
նունս տալ և մինչև անգամ ձեզ երկնային իմ
երեխան համարել»:

Ոչ, Նահապետը այդ էլ չէ անում: Թէ նա և

թէ Նաղայի եղբայրը, միայն խօսում են, խօ-
սում են,—և թողնում են նրան կորչելու, անձ-
նատպաւորութիւն գործելու: Օրիորդի անձնատպա-
ւորութեան լուրն էլ թէ Օտարականը և թէ պ. Ազա-
տեանը, որ իր թէ սիրահարված է Նաղայի վրա,
զարմանալի, տարօրինակ կերպով են ընդունում:
Երեւոյալացէք որ ձեզ մօտ դալիս են և յայտ-
նում են որ ձեզ կինը, ձեզ բոլորը, ձեզ սիրածը,
ձեզ հայրը կամ մայրը յանկարծակի մտել են:
Ինչքան էլ դուք հաւատալիք բերած լուրի ճշմար-
տութեանը, բայց մարդկային որպէս յատուկ է
սարսափելի բանին իսկոյն չը հաւատալ, չը հա-
ւատալ այն լուրին, որին մարդը չէ ուղում հաւա-
տալ: Նախկին է այդ բոլորին աղաղակել «ոչ, այդ
անհայտնի է» և անմիջապէս վազել դէպի սիրած
առարկան, չը հաւատալով լուրի սարսափելի իրա-
կանութեանը, և անձամբ աղանդաւոր վերադառնալ
իրողութիւնը:

Օտարականը բերում է լուրը թէ Նաղային ջրի մէջ
խեղդվել է: Եւ ոչ ոք անգից չէ չարութեան, ոչ ոք
խեղդարի պէս, զլխապատառ չէ դուրս վազում
անմեղ, որ ինքն գնալ վերադառնալ, գուցէ նա
գիւ. մեռած չէ, գուցէ կարելի է կիսաքի բերել...
Գա է բնականը. գիտեմ որ մեր սիրածը մեռել է,
բայց նախ աստիճան դա հիշեաւոր է երեւում մեզ,
որ հաւատալ էլ չենք կարող...

Ապետեանների բնականից զարմանալի անդամ-
ներից է բաղկացած, որոնք հողերանական բացառու-
թիւն են կարծում մարդկութեան մէջ: Բոլորը մեռ-
ն են իրանց տեղը, սիրում են լաց լինել, հեկեկալ,
որդին օգուտ է քաղում այդ դէպքից որ լաւ խա-
տի իր հօրը, այնքան անգութ լինելով որ հօր կրած
հարուածի վրա նոր հարուածներ էլ է աւելացնում,
բարոյապէս տառաջանելով նրան: Իսկ սիրելիները,
Նահապետը, նախկին է սենեակի մի անկիւնում և
մինչև անգամ լաց էլ չէ լինում:

Հնարաւոր է, ի հարկէ, որ դերասանները իրանց
վատ խաղով, կամ թաւառով վարչութիւնը իր
կողմնադատութեամբ և թշնամութեամբ դէպի հե-
ղինակ մասամբ փչացրին սիրեանը: Բայց ինչ
քան էլ վատ խաղային դերասանները, ինչքան էլ
անկատար լինել սիրելայի միջոցն-սէրը, գարծաւ
պիեսայի միտքը, գաղափարը իմ նոյնը կը մնար,
չէր կարող փոխվել. գարծաւ չէր կարող փոխ-

վել և այն որ դրամայի ամենազլխաւոր և նշա-
նաւոր անցքերը բնիկ ետեղի են կատարւում, իսկ
հանդիսականները նրանց հետանքների մասին ի-
մանում են միայն դերասանների պատմածներից,
չէր կարող փոխվել և այն որ պիեսայի մէջ անձ-
նատպաւորութիւնների մեծ մասը փոխադարձապէս ո-
չինչ ներգործութիւն չունեն միմեանց վրա և
պիեսայի ամբողջ ընթացքի վրա, չէին կարող
փոխվել այն տեղերը, որոնք վերաբերում են կամ
մարդու էթիկական (բարոյական) կամ էթիկա-
կական (գեղատիպական) զգացմունքը: Մի լաւ
կրթված, թէ և օտարացած օրիորդ, նախ գաղանի
յարարելութիւններն ունելով մի երկուսն արդի հետ,
որին սիրում է, յղիւնում է նրանից, իսկ յետոյ,
կրք տա հրաժարվում է նրա հետ պատկերաց, կան-
չէ է առկա իր սենեակը և ապաւանդել է անուշ-
նում իր երեխայի հօրը: Մի կրթված ընտանեկան
շրջանում բարձրաձայն և երկար ու բարակ խօս-
վում է, նոյն իսկ օրիորդը ներկայութեամբ, թէ
նա արձակել է աղանդան, լուսացարարին քանի
մի շարքի է արդէն լուսացք չէ յանձնում, և հազ-
նում է անդադար կեղծոտ տակի ձերմակե-
ղէն... Այդ գիտեմ ինչ նպատակով,—որ ծածկի
թէ յղի է...

Սենեակի մի Արծրաւու պիեսայի դրված է ոչ
թէ ինչ ուղիւ ալ մեթօքով, այսինքն այն մեթօ-
քով որ իր համար անհրաժեշտ հիւր է ընդունում
դիտողութիւն, իրականութեան ճիշդ հետազոտու-
թիւն, իրականութեան հոգեբանական նուրբ քնն-
նութիւն, այլ աւելի դեղուկ տիվ մեթօքով, որ
աւելնելի մատչելի չէ, որ շատ հեշտ կարող
է սխալեցնել մեզ, հատարակ մահկանացուների: Այդ
պիեսայի մէջ ոչ թէ դիտած, հետազոտված և հա-
ւաքված իրողութիւնները դուրս է բերված հե-
տեանը, այլ հեղինակը իրան նախ մի նպատ-
ակ է դրել և այդ նպատակին անպատճառ ու-
ղեցել է յարմար եղանակ վատարել իրողութիւն-
ներ. նախ հետեւանք է իրան զգաղակ և ապա
այդ հետեւանքին յարմարեցրել է ամբողջ պիեսա-
յի ընթացքը:

Գրիգոր Արծրաւուն

